

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ,
ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆԻՆ

ԴԻՄՈՒՄ

Դիմումատու

Ֆիզիկական անձի անուն, ազգանունը կամ իրավաբանական անձի անվանումը
(լիազորված անձի անուն, ազգանունը)

*<<Հայաստանի Հելսինկյան կոմիտե>> իրավապաշտպան հասարակական
կազմակերպություն*

Գործունեության հասցե

ք. Երևան, Պուշկինի Յա

Հեռախոսահամար(ներ)

(010)56-03-72

Էլեկտրոնային փոստի հասցե(ներ)

info@armhels.com

Դիմումի առարկան

Ներկայացնելով սույն դիմումը՝ հայտնում եմ, որ ցանկանում եմ ընդգրկվել ՀՀ արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում: Այդ կապակցությամբ սույն դիմումին կից ներկայացվում է՝

Կանոնադրություն,

*Կազմակերպության կանոնադրությունը տեղադրված է կազմակերպության կայքում
հետևյալ հղումով.*

http://armhels.com/wp-content/uploads/2012/06/Kanonadrutyun_2012.pdf

Համապատասխան ոլորտում մասնագիտական փորձառության առկայությունը
հավաստող փաստաթղթեր,

*Հաջորդ կետերում ներկայացված հրապարակումները փաստում են մասնագիտական
փորձառության առկայությունը*

Ոլորտին առնչվող հրապարակումներ,

2009թ. հրապարակվել է <<Խաղաղ հավաքների ազատության մոնիթորինգ Հայաստանում>> զեկույցը (Տես http://armhels.com/wp-content/uploads/2012/06/905arm-Xaxax_havaqneri_azatutyun.pdf),

2010թ. Հրապարակվել է <<Կրոնի ազատությունը Հայաստանում>> ուսումնասիրությունը (Տես http://armhels.com/wp-content/uploads/2012/06/1071arm-Kroni_Azatutyune_Hayastanum.pdf),

2013թ. հրապարակվել է <<Անձանց նկատմամբ վերաբերմունքը ոստիկանության բաժիններում>> զեկույցը, (տես <http://armhels.com/wp-content/uploads/2013/04/zekuyc-2013.pdf>),

2013թ. հրապարակվել է <<Ազատագրկում, թե տառապանք, կյանքը քրեակատարողական հիմնարկներում>> զեկույցը (Տես <http://armhels.com/wp-content/uploads/2013/12/zekuyc-2014Arm-NN.pdf>):

Կազմակերպության կայքում (armhels.com), զեկույցներ բաժնում կարող եք գտնել կազմակերպության կողմից հրապարակված մարդու իրավունքներին առնչվող տարբեր ժամանահաստիակներում իրականացված տասնյակ ուսումնասիրություններ և զեկույցներ:

□ Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրեր,

<<Խաղաղ հավաքների ազատության մոնիթորինգ Հայաստանում>> զեկույցը պատրաստվել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի հետ համագործակցելով:

<<Կրոնի ազատությունը Հայաստանում>> ուսումնասիրությունը կատարվել է Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի հետ համագործակցելով:

<<Անձանց նկատմամբ վերաբերմունքը ոստիկանության բաժիններում>> զեկույցը պատրաստվել է Միջազգային բանտային բարեփոխումներ (PRI) կազմակերպության հետ համագործակցելով:

<<Ազատագրկում, թե տառապանք, կյանքը քրեակատարողական հիմնարկներում>> զեկույցը պատրաստվել է Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի և Բաց հասարակության հիմնադրամների հետ համագործակցելով:

□ Նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբերի և հանձնաժողովների աշխատանքներին մասնակցությունը հիմնավորող փաստաթղթեր,

Կազմակերպությունը 2004թ. անդամակցում է ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբին:

Տարիներ շարունակ կազմակերպությունը ընդգրկված է եղել ՀՀ արդարադատության նախարարության հասարակական խորհրդի կազմում:

ՀՀ արդարադատության նախարարության տիրապետության տակ առկա են նշված պնդումները հիմնավորող փաստեր:

□ Կազմակերպության կողմից լիազորված անձ լինելու փաստը հաստատող փաստաթուղթ:

Կազմակերպության կանոնադրության 7.13 կետի 1-ին մասի համաձայն Նախագահը ներկայացնում է Կազմակերպությունն առանց լիազորագրի:

Հավաստում եմ, որ տվյալ պահին չեմ ստանում ֆինանսավորում և դրամաշնորհ ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

Դիմող՝

Հայաստանի Հելսինկյան

կոմիտեի նախագահ՝



Ավետիք Բշխանյան

«18» ապրիլի 2019թ